Արձանագրություն N 2

Երևան քաղաքի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և փողոցների ճաքալցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/61» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

02.02.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/61» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Տ. Իգիթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի փետրվարի 2-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/61» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Սեյսմշին» ՍՊԸ և «Գաբոարտ» ՍՊԸ /ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ/
2	«Արխինէքս» ՍՊԸ
3	«Շինարարություն, բարեկարգում» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Բաց ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգման և փողոցների ճաքալցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային արժեքը	Առաջարկած գինը		
		Ինքնարժեք	Շահույթ	Ընդհանուր
«Սեյսմշին» ՍՊԸ և «Գաբոարտ» ՍՊԸ /ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ/	33835000	1200000	80000	1280000
«Արխինէքս» ՍՊԸ		9540000	954000	10494000
«Շինարարություն, բարեկարգում» ՓԲԸ		30700000	3070000	33770000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ. Իգիթյան)

4.1 «Շինարարություն, բարեկարգում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

4.2 «Արխինէքս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, պահանջագրում նշված թվերով գրված գումարը չի համապատասխանում տառերով գրված գումարին՝ «210 000 (երկու հարյուր տասը) ՀՀ դրամ», բացակայում է արժույթի կոդը,

4.3 «Սեյսմշին» ՍՊԸ-ն և «Գաբոարտ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցել են համատեղ գործունեությամբ: Հայտով ներկայացված 3.1 հավելվածով «Գաբոարտ» ՍՊԸ-ն ներկայացրել է մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, սակայն ներկայացված կոնսորցիումի պայմանագրով մասնակիցները «մասնագիտական փորձառության» որակավորման չափանիշի մասով պարտավորություն չեն ստանձնել: Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 6-րդ ենթակետի համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի կողմերի միջև կնքված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին: Հաշվի առնելով հայտում առկա անհամապատասխանությունը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել բացման նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին /03.02.2017թ./՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը: Ծանուցումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա

ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու դեպքում վերջինիս հայտը կգնահատվեն բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 07.02.2017թ. ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան